Ձև N 2

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Արուս Թումանյան՝ Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**. – Սերբիա, Վոյեվոդինա, Նովի Սադ, 14-18.04.2024թ.

4. **Հրավիրող կողմը** (առկայության դեպքում). – FAO, UNDP

5. **Գործուղման նպատակը** – Այցի նպատակը հանդիսանում է ծանոթանալ Սերբիայում ՏԱԽ-երի ձևավորման և կառավարման գործընթացներին:

6. **Քննարկված թեմաները** (հարցերը)- 2005թ-ից ունեն մշակված գյուղական զարգացման քաղաքականություն, 2009թ-ին ընդունվել է առաջին օրենքը այդ քաղաքականության համար՝ IPARD ծրագրի շրջանակներում, ունեն 40 գործող տեղական ակտիվ խմբեր (ՏԱԽ), 21 նոր ձևավորող ՏԱԽ-եր: Սերբիայում ևս ծրագիրը տևել է շուրջ 3 տարի, այնուհետև ունեցել են խնդիր այդ խմբերի պահպանման համար, եղել են դեպքեր, որ ստեղծված խումբը փակվել է, որոշների պահպանման համար համայնքները և մարզպետարանները ֆինանսական միջոցներ են տրամադրել: Ներկայումս ունեն օրենքի կետեր ռազմավարություններում և մշակված կանոնակարգ նախատեսված ՏԱԽ-երի համար: ՏԱԽ-երը ձեռք են բերում ասոցացիայի կարգավիճակ, որի համար ներկայացնում են նախնական հայտ, մշակված ռազմավարություն, որպեսզի կարողանան գրանցվել և շարունակել իրենց գործունեությունը: ՏԱԽ-երի գործունեության համար տրամադրվում է ֆինանսական միջոցներ պետական ֆոնդից (համայնքային և մարզային բյուջե), ինչպես նաև IPARD-ից (ֆինանսական աղբյուր ԵՄ թեկնածու երկրներին): Պետությունը վերահսկում է ՏԱԽ-ի գործունեությունը, կատարվում է նաև անկախ գնահատում: Մեկ ՏԱԽ-ի համար պահանջվում է 88.000 եվրո, որի 90%-ը ֆինանսավորում է IPARD-ից, 10 %-ը պետությունից: Ֆինանսական ծախսերը բաժանվում են 2 ուղղության՝ ռազմավարության ստեղծման և ծրագրերի իրականացման:

Քննարկվել է նաև Սերբիայում գյուղատնտեսության պետական աջակցության ծրագրերի մեխանիզմները, կատարման և ֆինանսավորման գործընթացները:

Այցելություն ենք ունեցել Վոյեվոդինայի մարզի Նովի Սադ համայնք, հանդիպել ենք համայնքի քարտուղարության կազմի հետ, ներկայացրել են համայնքային ռազմավարությունը, որը կազմված է 3 գերակա ուղղություններից՝ գյուղատնտեսություն (հողագործություն, անասնապահություն), ջրային ռեսուրսների կառավարում և անտառտնտեսության զարգացում: Գյուղատնտեսությունը կազմում է 90 %-ը տարածքի՝ ի շնորհիվ բարեբեր հողերի,

ինչպես նաև հանդիսանում է տեղական էկոնոմիկայի հիմնական բաղկացուցիչ մասը: Թունաքիմիկատների և պեստիցիդների օգտագործման ցածր մակարդակ է, ֆերմերային տնտեսություններ ունեցողների համար պարտադիր պայման է մասնագիտական կրթությունը, օրգանիկ գյուղատնտեսությունն է հիմնականում, օրենքը արգելում է ԳՄՕ արտադրանքը: Կան շուրջ 79 ներդրող ընկերություններ՝ միջինում 3 մլրդ եվրո, 12,200 գործընկերներ, 128.465 ֆերմերային տնտեսություններ՝ միջինում 12,3 հա: Գրանցված տնտեսությունները 530000 են (ընտանիքի յուրաքանչյուր անդամը կարող է որպես առանձին տնտեսվարող գրանցված լինել): Ծրագրերի իրականացման համար խրախուսվում են նոր գրանցված տնտեսությունները, 18-40 տարիքային խումբը, պարտադիր է մասնագիտական կրթությունը, որի արդյունքում էլ կարող են ստանալ 90 % աջակցություն: Տեղնիկայի ձեռք բերման համար տրամադրվում է 40-60-80 %-ի չափով ֆինանսավորում: Ֆինանսական աղբյուրները՝ ազգային, մարզային, տեղական: Մարզային բյուջեի 10 %-ը գյուղատնտեսությանն է (90 մլն եվրո), 70 %-ը ջրային ռեսուրսների կառավարմանը, մնացածը անտառտնտեսություններին:

Հանդիպել ենք Կուլա վարչական տարածքի ՏԱԽ-ի գործադիր տնօրենի հետ, որը ներկայացրեց իրենց ՏԱԽ-ի անցած ճանապարհը, իրականացված ծրագրերը, այցելեցինք կից վաճառակետը, որտեղ ներկայացված են այդ ՏԱԽ-ի ծրագրերի արդյունքները՝ արտադրանքի տեսքով (ալյուր, մակարոնեղեն, մեղր, մուրաբաներ, գինիներ, ձեռքի աշխատանքներ և այլն):

7. **Հանդիպումները**- Գյուղատնտեսության նախարարությունում նախարարի տեղակալի և աշխատակազմի ղեկավարի, Սերբիայում իրկանացված LEADER ծրագրի աշխատանքային խմբի անդամների և համալսարանական ներկայացուցիչ, Վոյեվոդինայի մարզի Նովի Սադ համայնքի քարտուղարության կազմ, Կուլա վարչական տարածքի ՏԱԽ-ի գործադիր տնօրեն

8. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**- Չկան

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**- ելնելով մեր ռազմավարությունից ձեռք բերված գիտելիքները և փորձառությունը կիրառել ՀՀ համայնքներում:

Գործուղվող՝ Ա. Թումանյան

19.04.2024թ.